ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԱՇՏԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

14.02. 2018թ
N_33_

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐ-Ն Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի մարզպետ,

Ձեզ ենք ներկայացնում Դաշտաքար համայնքի 08.02.2018 թվականի ավագանու թիվ 3 նիստի արձանագրությունը:

Համայնքի ղեկավար՝ Ն. Մալխասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԱՇՏԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2018 թ-ի փետրվարի 8-ին, ժամը 11-ին, Դաշտաքար համայնքում տեղի ունեցավ ավագանու թիվ 3 նիստը: Նիստին մասնակցում էին ավագանու անդամներ.

Աբրահամ Աբրահամյան
Լյուդվիգ Այնազյան
Արմեն Աթոյան
Արամ Մալխասյան
Անգին Սարգսյան

Համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ՝ Հ. Հակոբյանը
Նիստը նախագահում էր Համայնքի ղեկավար՝ Ն.Մալխասյանը
Նիստը քարտուղարում էր աշխ. քարտուղար՝ Ա. Վարդանյանը

Օրակարգում՝

1. Օրակարգը հաստատելու մասին հարցը
2. համայնքապետարանի գույքի տարեկան գույքագրման ցանկի ամփոփման և հաստատման մասին հարցը .
3. Համայնքի վարչական տարածքում ընդգրկված պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալությամբ տրամադրելու համար համաձայնություն տալու մասին հարցը
4. Համայնքի վարչական տարածքում ընդգրկված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի աճուրդային կարգով օտարման համար համաձայնություն տալու մասին հարցը

Լսեցին---Նիստի օրակարգը հաստատելու մասին հարցը.

/Զեկ.Ն.Մալխասյանը /

Արտահայտվեցին ավագանու անդամներ Աբրահամ Աբրահամյանը, Արմեն Աթոյանը և Արամ Մալխասյանը

Լսելով զեկուցողին և արտահայտվողների կարծիքները, որոնք իրենց խոսքում պաշտպանեցին համայնքի ղեկավարի առաջարկությունը

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման Մասին» օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով
Դաշտաքարի ավագանին որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ 6

Հաստատել 08.02.2018 թվականի ավագանու նիստի օրակարգը.

1. Օրակարգը հաստատելու մասին հարցը
2. համայնքապետարանի գույքի տարեկան գույքագրման ցանկի ամփոփման և հաստատման մասին հարցը .
3. Համայնքի վարչական տարածքում ընդգրկված պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալությամբ տրամադրելու համար համաձայնություն տալու մասին հարցը
4. Համայնքի վարչական տարածքում ընդգրկված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի աճուրդային կարգով օտարման համար համաձայնություն տալու մասին հարցը

Որոշումն անցավ միաձայն

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնագյան

Արմեն Աթոյան

Արամ Մալխասյան

Անգին Սարգսյան

2. Լսեցին --Համայնքապետարանի գույքի տարեկան գույքագրման ցանկի ամփոփման և հաստատման մասին հարցը

(զեկ. Ն. Մալխասյան)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց ավագանու անդամներին համայնքապետարանի գույքի ցանկը: Արտահայտվեցին ավագանու անդամներ՝ Ա.Մալխասյանը, Ա. Սարգսյանը և Ա.Աթոյանը:

Լսելով զեկուցողին և արտահայտվողների ելույթը՝

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի դրույթներով ավագանին որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ 7

Հաստատել Դաշտաքարի համայնքապետարանի 2018 թվականի գույքագրման ցանկը համաձայն հավելված 2-ի:

Հավելված 2

# ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑԱՆԿ

Դաշտաքարի համայնքապետարանում գույքագրում անցկացնելու համար համայնքի ղեկավարի թիվ 3 կարգադրությունով կազմել հանձնաժողով հետևյալ կազմով:

Հանձնաժողովի նախագահ՝ Է. Ղազարյան

Անդամներ՝ Հ. Հակոբյան

Ա. Վարդանյան

Ա. Աբրահամյան

| հ/հ | Գույքի անվանումը | Չափ.միավ | քանակ | գին | գումար | ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | համայնքապետարանի շենք | հատ | 1 | 5092962 | 5092962 | |
| 2 | Ավտոմեքենա LADA 21214 | հատ | 1 | 5820000 | 5820000 | |
| 3 | համակարգիչ | հատ | 1 | 215000 | 215000 | |
| 4 | համակարգիչ 2 | հատ | 1 | 249000 | 249000 | |
| 5 | Համակարգիչ 3 Intel Celeron | հատ | 1 | 185000 | 185000 | |
| 6 | պրինտեր | հատ | 1 | 105000 | 105000 | |
| 7 | պատճենահանող սարք | հատ | 1 | 128000 | 128000 | |
| 8 | էլ. պլիտա | հատ | 2 | 12000 | 24000 | |
| 9 | աթոռներ | հատ | 8 | 11500 | 92000 | |
| 10 | աթոռ բարձր | հատ | 1 | 15000 | 15000 | |
| 11 | հաշվիչ սարք | հատ | 2 | 1800 | 3600 | |
| 12 | հաշվիչ էլ. էներգիա | հատ | 1 | 5900 | 5900 | |
| 13 | չհրկիզվող պահարան | հատ | 1 | 20000 | 20000 | |
| 14 | հեռուստացույց | հատ | 1 | 85000 | 85000 | |
| 15 | գրասեղան | հատ | 1 | 140000 | 140000 | |
| 16 | գրասեղան | հատ | 1 | 80000 | 80000 | |
| 17 | գրապահարան | հատ | 1 | 122000 | 122000 | |
| 18 | պահարան | հատ | 1 | 90000 | 90000 | |
| 19 | գրադարակ երկաթյա | հատ | 7 | 500 | 3500 | |
| 20 | գիրք | հատ | 200 | 6 | 1200 | |
| | ընդամենը | | | | | |

Հանձնաժողովի նախագահ՝ Է. Ղազարյան

Անդամներ՝ Հ. Հակոբյան

Ա. Վարդանյան

Ա. Աբրահամյան

Որոշումն անցավ միաձայն.

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնագյան

Արմեն Աթոյան

Արամ Մալխասյան

Անգին Սարգսյան

3. Լսեցին --- Համայնքի վարչական տարածքում ընդգրկված պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալությամբ տրամադրելու համար համաձայնություն տալու մասին հարցը

(զեկ. Ն. Մալխասյան)

Արտահայտվեցին ավագանու անդամներ Ա. Սարգսյանը, Ա.Մալխասյանը և Ա. Աթոյանը
Լսելով զեկուցողին և արտահայտվողների կարծիքները
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 14.01.2010թ-ի N 16-Ն որոշման պահանջներով.
Դաշտաքարի ավագանին որոշում է

ՈՐՈՇՈՒՄ 8

1. Տալ համաձայնություն Դաշտաքար համայնքի վարչական տարածքում ընդգրկված պետական և համայնքային սեփականություն հանդիսացող ստորև բերված հողամասերը մրցութային կարգով տրամադրել վարձակալության.

| Լոտի համարը | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Ծածկագիրը | Մակերեսը /հա/ | Գնահատման շրջանը և խումբը | Սուբյեկտը | Վարձավճարի մեկնարկային գինը /զուտ եկամտի 15 %/ ՀՀ դրամ | Վարձակալության իրավունքի տրամադրման ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտե-սական | Վարելահող | 0118-0014 | 1,462 | ՎՆԱ, IV | Դաշտաքար համայնք | 6100 | 25 |
| 2 | Գյուղատնտե-սական | Վարելահող | 0119-0001 | 1,047 | ՎՆԱ, III | Դաշտաքար համայնք | 7200 | 25 |
| 3 | Գյուղատնտե-սական | Վարելահող | 0119-0001 | 1,9879 | ՎՆԱ, III | Դաշտաքար համայնք | 13660 | 25 |
| 4 | Գյուղատնտե-սական | Վարելահող | 0119-0001 | 1,37455 | ՎՆԱ, III | Դաշտաքար համայնք | 9450 | 25 |
| 5 | Գյուղատնտե-սական | Վարելահող | 0119-0001 | 0,55577 | ՎՆԱ, III | Դաշտաքար համայնք | 3820 | 25 |
| 6 | Գյուղատնտե-սական | Արոտավայր | 0150-0001 | 175,0 | ՎՆԱ, կիսաանապա տային V | ՀՀ | 34130 | 10 |
| 7 | Գյուղատնտե-սական | Արոտավայր | 0149-0001 | 200,0 | ՎՆԱ, կիսաանապա տային V | ՀՀ | 39000 | 10 |
| 8 | Գյուղատնտե-սական | Արոտավայր | 0168-0016 | 28,0 | ՎՆԱ, կիսաանապա տային V | ՀՀ | 5460 | 10 |
| 9 | Գյուղատնտե-սական | Արոտավայր | 0168-0016 | 5,0 | ՎՆԱ, կիսաանապա տային IV | ՀՀ | 2850 | 10 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | Գյուղատնտե-սական | Արոտավայր | 0168-0016 | 0.34 | ՎՆԱ, կիսանապա տային V | ՅՅ | 70 | 10 |
| 11 | Գյուղատնտե-սական | Արոտավայր | 0162-0001 | 6,0 | ՎՆԱ, կիսանապա տային V | ՅՅ | 1170 | 10 |

Որոշումն անցավ միաձայն.

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնազյան

Արմեն Աթոյան

Արամ Մալխասյան

Անգին Սարգսյան

4.Լսեցին - Համայնքի վարչական տարածքում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասի աճուրդային կարգով օտարման համար համաձայնություն տալու մասին հարցը.

/Զեկ.Ն.Մալխասյանը /

Արտահայտվեցին ավագանու անդամներ Ա. Մալխասյանը և Ա. Սարգսյանը

Լսելով զեկուցողին և արտահայտվողների կարծիքները,
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 14.01.2010 թվականի 16-Ն որոշման պահանջներով.
Դաշտաքարի ավագանին որոշում է

## ՈՐՈՇՈՒՄ 9

1. Տալ համաձայնություն՝ աճուրդային կարգով օտարելու Դաշտաքար համայնքի վարչական տարածքում ընդգրկված համայնքային սեփականություն հանդիսացող 0,037 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի հողամասը:
2. Օտարման մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 100 %-ի չափով:

Որոշումն անցավ միաձայն

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնազյան

Արմեն Աթոյան

Արամ Մալխասյան

Անգին Սարգսյան

Ավարտելով հաստատված օրակարգի հարցերի քննարկումները՝ համայնքի ղեկավարը հանդես եկավ հայտարարությամբ և նիստը հայտարարեց փակված:

Համայնքի ղեկավար՝ Ն.Մալխասյան

Աշխ. քարտուղար՝ Ա. Վարդանյան